ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԵՌՈՒՏԱՍԵՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

N-ՀՄ-02/814/24
«14» նոյեմբեր 2024թ.

ՀՀ ֆինանսների նախարարի
տեղակալ՝ Ավագ Ավանեսյանին

Հարգելի պարոն Ավանեսյան,

Կից Ձեզ է ուղարկվում **ՀՀՀ-ԳՀԾՁԲ-23/9** ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Լիմետ Գրուպ» ՍՊ ընկերությանը ներառելու որոշումը:

Առդիր՝ 14 (տասնչորս) էջ:

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն **Հովհաննես Մովսիսյան**

Կատարող՝
Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
Նունե Սողոմոնյան
Հեռ.(010) 65-00-15
Էլ. փոստ՝ nune.soghomonyan@1tv.am

Երևան, Նորք 0011
Գ. Հովսեփյան 26
հեռ.՝ +374 10 65 00 15
էլ. հասցե՝ ceooffice@1tv.am

www.1tv.am

ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք. Երևան **«13» նոյեմբերի 2024թ.**

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության (Այսուհետ՝ Պատվիրատու) կողմից 2023 թվականի հուլիսի 18-ին հայտարարված **ՀՀՀ-ԳՀԾՁԲ-23/9** ծածկագրով ***անտառտնկման ծառայությունների ձեռքբերման*** ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտ ներկայացրած «Լիմետ Գրուպ» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը (ՀՎՀՀ՝ 01044121, գործունեության հասցե՝ ք. Երևան, Քանաքեռ 2-րդ փող., 2-րդ նրբ., տուն 5, հեռ. +374 98 882 275, էլ. հասցե՝ limet.group@mail.ru) խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, մասնավորապես.

Ընթացակարգի շրջանակներում «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության հետ կնքված թիվ **«ՀՀՀ-ԳՀԾՁԲ-23/9-1»** պայմանագրի (Այսուհետ՝ Պայմանագիր) 2.4.1 կետը, որի համաձայն «Լիմետ Գրուպ» ՍՊ ընկերությունը պարտավոր է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

Հարկ է նշել, որ Պայմանագրի N1 Հավելվածով ծառայության մատուցման առաջին փուլի աշխատանքների ժամկետի ավարտը 2024 թվականի սեպտեմբերի 27-ն էր, սակայն մինչ այդ ժամկետը աշխատանքները կատարված չեն եղել, իսկ կատարված աշխատանքներում, որոնք շատ քիչ տոկոս են կազմել, հայտնաբերվել են խախտումներ և շեղումներ: Դրանք արձանագրվել են «Լիմետ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից իրականացվող 2.8 հա անտառատնկման աշխատանքների տեխնիկական, մասնագիտական հսկողության և ընդունման խորհրդատվական ծառայություններ մատուցող՝ «Հայանտառ» պետական ոչ

առևտրային կազմակերպության կողմից ներկայացված Արձանագրություններում (N1,N2,N3 Արձանագրությունները կցվում են):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Լիմետ Գրուպ» ՍՊ ընկերությունը խախտել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները և առաջնորդվելով Պայմանագրի 2.1.3 կետով՝ «*Հայաստանի հանրային հեռուստաընկերություն*» ՓԲ *ընկերությունը միակողմանի* (մասնակի) հրաժարվել է կնքված Պայմանագրից՝ այդ մասին ծանուցելով «Լիմետ Գրուպ» ՍՊ ընկերությանը՝ սահմանված կարգով և ժամկետում:

Տեղեկացնում ենք նաև, որ «Լիմետ Գրուպ» ՍՊ ընկերությունը հնարավորություն է ունեցել պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման համար ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4.2 և հավելված 5.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությանը սպասարկող բանկի անունով բացված *հաշվեհամարին փոխանցելու նպատակով, դրանով իսկ խուսափելով գնումների գործընթացին* մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելուց:

Սակայն, ելնելով այն հանգամանքից, որ «Լիմետ Գրուպ» ՍՊ ընկերությունը չի ներկայացրել տուժանքի մասին համաձայնագրերը և հիմք ընդունելով ՀՀ Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի Ա ենթակետը ***(խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը).***

ՈՐՈՇԵՑԻ

«Լիմետ Գրուպ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Առդիր՝ 1 փաթեթ:

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն **Հովհաննես Մովսիսյան**